

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ և ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ, ՏՈՒՐԻԶՄԻ և ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋև ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը և Ռուսաստանի Դաշնության սպորտի, տուրիզմի և երիտասարդական քաղաքականության նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով երկու պետությունների ժողովուրդների միջև ավանդական բարեկամական կապերն ամրապնդելու և զարգացնելու փոխադարձ ցանկությամբ,

հաստատելով իրավահավասարության սկզբունքի վրա հիմնված՝ երիտասարդության հարցերով զբաղվող պետական մարմինների, ազգային, տարածքային և երիտասարդական այլ կազմակերպությունների միջև լայն համագործակցության ճանապարհով միջազգային համագործակցությունն ընդլայնելու և կատարելագործելու ցանկությունը,

համոզմունք հայտնելով, որ երիտասարդությանն առնչվող հարցերի բնագավառում փոխադարձ սերտ կապերի և համագործակցության ստեղծումը կնպաստեն Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության երիտասարդ սերնդի ներկայացուցիչների միջև փոխըմբռնման խորացմանը, համաձայնեցին ներքոգրյալի շուրջ.

### Հոդված 1

Կողմերը, համաձայն սույն Համաձայնագրի, համագործակցում են երիտասարդությանն առնչվող հարցերի բնագավառում՝ իրենց ազգային օրենսդրությանը համապատասխան և իրենց իրավասության շրջանակներում:

Կողմերը երիտասարդության և երիտասարդական միավորումների հարցերով պետական մարմինների միջոցով ամեն կերպ օժանդակում են երիտասարդության հետ տարվող աշխատանքի բնագավառում իրավահավասար և փոխշահավետ համագործակցության ամրապնդմանն ու զարգացմանը, ակտիվորեն աջակցում են երիտասարդական համագործակցության ակտիվացմանն ուղղված՝ երիտասարդությանը երկու պետությունների մշակութային ժառանգությանը ծանոթացնելու նրանց նախաձեռնություններին, ապահովում են նրանց մասնակցությունը երիտասարդության հետ տարվող աշխատանքի ոլորտում նախագծերի և ծրագրերի իրականացմանը:

### Հոդված 2

Կողմերը խրախուսում և օժանդակում են երիտասարդական քաղաքականության ոլորտին առնչվող կապերի և համագործակցության զարգացմանը՝

- Կողմերի միջև համատեղ աշխատանքի, կապերի և փոխանակումների համար բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով,

- երիտասարդությանն առնչվող հարցերի բնագավառում աշխատանքային փորձի փոխանակման միջոցով, - Կողմերի պետությունների տարածքներում ընդհանուր ծրագրերի ներդրմանը և երիտասարդական միջոցառումների՝ համագումարների, սիմպոզիումների, խորհրդաժողովների, համաժողովների, սեմինարների, ուսուցողական դասընթացների, փառատոների, ֆորումների, բրիֆինգների, ցուցահանդեսների, մրցույթների, հանդիպումների անցկացմանն օժանդակելու միջոցով:

### Հոդված 3

Կողմերն օժանդակում են բոլոր մակարդակներում պետական և ոչ պետական կազմակերպությունների միջև անմիջական կապերի զարգացմանը՝ ներառյալ պատվիրակությունների, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ տեղեկատվության փոխանակումները, ինչպես նաև համատեղ մշակված ծրագրերով միջոցառումների անցկացումը:

### Հոդված 4

Կողմերը բարենպաստ պայմաններ են ստեղծում երիտասարդների ամառային հանգստի կազմակերպման, արձակուրդների ընթացքում ուսանողական խմբերի փոխանակման համար:

Կողմերը փոխանակում են տեղեկատվություն երիտասարդության խնդիրներով զբաղվող համապատասխան միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև իրենց պետությունների պետական և հասարակական կազմակերպությունների աշխատանքի վերաբերյալ:

### Հոդված 5

Կողմերը խրախուսում են երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում մարզիչ-դասավանդողների, այլ մասնագետների համագործակցությունը, ինչպես նաև աջակցում են նրանց փորձի փոխանակմանը:

### Հոդված 6

Կողմերն ապահովում են երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում վիճակագրական

և այլ տեղեկատվության փոխանակումը, այդ թվում՝

- իրենց պետություններում երիտասարդությանն առնչվող հարցերի բնագավառը կարգավորող օրենսդրական և այլ նորմատիվ իրավական ակտերի մասին,
- երիտասարդությանն առնչվող հարցերի բնագավառում քաղաքականության իրականացման իրավիճակի մասին,
- ուղեցուցային-տեղեկատվական, մեթոդական և այլ նյութերի մասին:

#### **Հոդված 7**

Կողմերը փորձի փոխանակում են իրականացնում երիտասարդներին հոգեբանական, իրավաբանական և այլ օգնություն տրամադրող կենտրոնների, սոցիալական ծառայությունների և դրանց մասնագիտացված կազմավորումների աշխատանքի վերաբերյալ:

#### **Հոդված 8**

Կողմերը նպաստում են փորձի փոխանակմանը աշխատանքային զբաղվածության ծրագրերի մշակման ու իրականացման բնագավառում, ինչպես նաև երիտասարդների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի ոլորտում:

Կողմերը խրախուսում են երիտասարդական՝ աշխատանքային և ուսանողական շինարարական ջոկատների փոխանակումները:

#### **Հոդված 9**

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը կիրականացվի փոխադարձության սկզբունքի հիման վրա, մասնավորապես՝

- ուղարկող Կողմը հոգում է իր պատվիրակության ճանապարհածախսը մինչև միջոցառման անցկացման վայր և հակառակ ուղղությամբ, ինչպես նաև արտասահման մեկնելու համար՝ իր պետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր տեսակի ապահովագրական ծախսերը,
- ընդունող Կողմն իր վրա է վերցնում կացության՝ այդ թվում տեղավորման, սննդի, ներքին տրանսպորտի, ինչպես նաև այլ անհրաժեշտ օգնությունը՝ իր պետության օրենսդրությանը համապատասխան:

#### **Հոդված 10**

Սույն Համաձայնագրով նախատեսվող գործունեության բոլոր տեսակները կֆինանսավորվեն Կողմերի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների սահմաններում:

#### **Հոդված 11**

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կծնակերպվեն առանձին արձանագրություններով:

Արձանագրություններն ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածով սահմանված կարգով:

#### **Հոդված 12**

Սույն Համաձայնագիրը չի շոշափում միջազգային այլ պայմանագրերից բխող՝ Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, որոնց մասնակիցն են Հայաստանի Հանրապետությունն ու Ռուսաստանի Դաշնությունը:

#### **Հոդված 13**

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ ծագած վեճերը և տարաձայնությունները Կողմերը լուծում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

#### **Հոդված 14**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցման օրվանից և գործում է Կողմերից մեկի՝ մյուս Կողմին դրա գործողությունը դադարեցնելու մտադրության մասին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից վեց ամսվա ընթացքում:

#### **Հոդված 15**

Սույն Համաձայնագրի գործողության դադարեցումը չի խոչընդոտում Կողմերի կողմից Համաձայնագրի դրույթների իրականացման նպատակով համաձայնեցված այն նախագծերի և ծրագրերի կատարմանը, որոնք չեն ավարտվել Համաձայնագրի գործողության դադարեցման պահին:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2011 թվականի հոկտեմբերի 24-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

*Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2012 թ. մարտի 2-ին*